

**ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Շիրոյեանի մահից յետոյ, որ տեղի ունեցաւ 1895 թուի գեկտեմբերի 22 ին, աշա իններորդ տարի է, որ Աթոռը թափուր էր մաղել և թեմը կառավարում էր կաթոլիկոսական տեղապահ վարդապետով և առանձին հարկ չէր համարուել կաթողիկոսի նոր ընտրութիւն կատարել: Այժմ, ինչպէս հազորդում են Կ. Պօլսի հայ թերթերը, Կ. Պօլսի Խառն ժողովը որոշում է կայագրել մասերում կաթոլիկոսական ընտրութիւն անել և պդ. նպատակով պատրիարքարանից կարեւր հրահանդները տրուել են արդէն ուր որ հարկն է Ընտրութեան հետևանքի մասին կծառցանենք իւր ժամանակին:

**ԳՐԻԲՈԵԴՈՎԻ ՄԵՀՈՒԱՆ 75 ԱՄԵԱԿ**

Յունուարի 30-ին լրացաւ ոռւս յայտնի բանաստեղծ «Շօրե օտե յամ» (Փելքից պատուհաս) կօմեդիայի հեղինակ Ալէքսանդր Սերգէէիչ Գրիբոեդովի մահուան 75 ամեակը:

Գրիբոեդովը յայտնի է ոռւս դրականութեան մէջ որպէս բանաստեղծ և ոռւսաց պատութեան մէջ իրեւ պետական դործիչ: Նա ոռւսական զեսպան էր Պարսկաստանում և սպանուեցաւ Թէհրանում պարսիկ ամրաթիթ ձեռքով: Նորա մարմինը բերուելով Թիֆլիս՝ թաղուցաւ Դաւիթ Գարեջացու վանքում Մթածմինդա սարի վերայ:

Նորա մահուան եօմանանամեակի օրը ոռւս դրամատիկ գրողների միութեան և Թիֆլիսի արտիստիք ընկերութեան նախաձեռնութեամբ հանդիսաւոր հոգեհանդիստ տեղի ունեցաւ հանգուցեալի զերեղմանի վերայ: Հոգեհանդիսին ներկայ էին բաղաբային վարչութեան կողմից պ. քաղաքագութեանց զանազան հաստատութեանց և ամեն ազգի խմբագրութեանց ներկայացուցիչներ և մեծ բազմութիւն հանգուցեալ մատենագրի տաղանդը յարգելու համար: Հոգեհանդիստին խօսուեցան ճառեր և Օպօզինիոն արտասանեց մի ոտանաւոր հանգուցեալ դրույի լիշտակին նուիրուած:

Գրիբոեդովի միութեան պատուհաս նշանաւոր կատակեր գութիւնը առաջին անգամ հայերէնի թարգմանեց հանգուցեալ կոստանդին Տէր-Աստուածատրեանդը և ներկայացուեց Թիֆլիսի հայկական բեմի վերայ:

**«ՑԱՐԱԶ»**

«Տարազ» շաբաթաթերթը յայտնում է, որ պյս տարի իւր բաժանորդագրութիւնը շատ յաջող է գնում: Վերանորոգուած շաբաթաթերթը գաւառներում մեծ ընդունելութիւն է

գտնում: Շատերը ցանկանում են, որ «Տարազը» օրաթերթի վերափոխուի: Միայնում ենք մեր ձայնը շատերի ձայնին և ցանկանում, որ օր առաջ իրավործուի հասարակութեան ցանկութիւնը:

Մաղթում ենք «Տարազին» կատարեալ յաջողութիւն.

### «Բաբինսկի Իշեմստիա»-ն «ԼՈՒՄԱՑ»-ի ՄԱՍԻՆ

«Լումայ» (իններորդ տարի), երկամսեայ հանդէս, պատմական, տեղագրական, գրական, չնազիտական, լեզուաբանական և նոյն իսկ գիտական նորութիւններ տուող զանազան յօդուածների ժողովածու: Հանդիսի Խմբագրութիւնը յաւակնութիւն էլ չունի իւր Հրատարակութիւնը պարբերական թերթ գարձնելու, թէև երբեմ-երբեմ տեղ է տալիս ժամանակակից անդքերի և տեսութիւնների: Աչա այս տեսակէտից և մենք կեօսենք նորա մասին:

Ընդհանրապէս առած «Լումայի» յօդուածներն ու գիտողութիւնները շատ աւելի բազմազան, չետաքրքրական և աւելի տաղանդաւոր են գրուած, քան «Մուրճակինը»: Եւ դա՝ հասկանալի է: «Լումայի» աշխատակիցները աւելի փորձառու և գիտակ գրական աշխատաւորներ են, և գրում են իրենց շատ լաւ ժանով նիւթի մասին: Կան մի քանիսը, որ հայ գրականութեան մէջ խոշոր անուն ունին:

Հանդէսն սկսում է Գամառ-Քաթիպսյի (Պատկանեան) մի սիրուն (որ կարծեմ առաջին անգամն է Հրատարակում) երգիծաբանական ոտանաւորով՝ նշանաւոր բանաստեղծի մտրակըն այս անգամ խարազանում է մեր ժամանակի սունկի պէս բաւող պարագորդ և մեղկ ռուկէ երիտասարդութիւնը», իւր նորոյթ (МОДНЯЙ) սանրուածքով, գեղեցիկ շարժուածներով ու ձևերով, նժոյզներ ճանաչելու անվրէպ ճաշակով, որկրամոլութեան և գերասանուչիների նուրբ բմբով: Պարագորդ կեանք անցնելով բէֆերի, խաղաթթիւ և կամ անբարյականութեան գրկում, այդ երիտասարդութիւնը վերջ ի վերջոյ ոչ մի երջանկութիւն չէ խոստանում ոչ իրեն և ոչ շրջապատող հասարակութեան ու ժողովրդին: Աչա այս մասին է վշտանում բանաստեղծը:

Յօդուածներից աչքի է ընկնում բժ. Լ. Ցիգրանեանի «Քորբատի համալսարանը և հայ-ուսանողները»: Բանն այն է, որ Քորբատի նախկին գերմանական համալսարանը ահագին այդեցութիւն է ունեցել հայ հասարակութեան վրայ: Հայ գրադէտներից, բանաստեղծներից, գիտականներից և հասարակական գործիչներից ամենից աւելի ականաւորները—Քորբատի նախկին ուսանողներ են: Նորա իրենց հասարակական և գրական գործնէութեան մէջ մտցրել են գերմանական չետևողականութիւ-